ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 137 – Ա **30 ապրիլի 2019 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9 - Ի N 36 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի օգոստոսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակների մշտական հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի ապրիլի 19 -ի N 31–Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 36–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Մարդկանց կյանքի և առողջության, նյութական ու մշակութային արժեքների պահպանությանն ուղղված՝ մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների և օբյեկտների գործունեությունը կոորդինացնելու, ինչպես նաև արտակարգ իրավիճակների կանխարգելման ու հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակների մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սանոսյան Գնել	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, հանձնաժողովի նախագահ
Գրիգորյան Նարեկ	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Գալստյան Գևորգ	- ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ, /համաձայնությամբ/
Ղազարյան Անուշավան	- ՀՀ Գեղարքունիքի մարզպետի խորհրդական,
Աբազյան Արմեն	- ՀՀ ազգային անվտանգության ծառայության Գեղարքունիքի մարզային վարչության պետ /համաձայնությամբ/
Ղազարյան Արամ	- ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ /համաձայնությամբ/
Մանուկյան Դավիթ	- երկրորդ բանակային զորամիավորման հրամանատար, /համաձայնությամբ/
Խլղաթյան Սևակ	- մարզպետարանի գլխավոր քարտուղար
Աղեկյան Ալբերտ	- մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ
Մուշեղյան Յուրա	- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և

սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Զոհրաբյան Արմեն - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Համբարձումյան Համբարձում - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Զազյան Կարեն - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Վարդանյան Լուսինե - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար

Հարությունյան Վանիկ - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Շահբազյան Հասմիկ - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

Խաչատրյան Արամ - մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ

Խաչատրյան Գևորգ - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ

Սաֆոյան Աննա - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ

Բիձյան Հակոբջան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ

Զիրոյան Մկրտիչ - «Գազպրոմ - Արմենիա» ՓԲԸ Գավառի ԳԳՄ տնօրեն /համաձայնությամբ/

Մարկարյան Վաղինակ - «Հայ ԷՑ» փակ բաժնետիրական ընկերության «Գեղամա» մասնաճյուղի Գավառի էլցանցի պետ /համաձայնությամբ/

Պողոսյան Անուշ - ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի «Հյուսիս արևելյան» տարածքային կենտրոնի պետի պաշտոնակատար /համաձայնությամբ/

Մուսոյան Սարգիս - «Վեոլիա ջուր» ՓԲԸ «Արևելք» տարածքային տնօրինության «Գավառ» տեղամասի շահագործման պետ /համաձայնությամբ/»:

30.04.2019

ՄԱՐԶՊԵՏ՝
Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Գ. SANOSYAN GNEL 1710830069

ք. Գավառ